ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/9707/02/25 ք. Երևան
21 Հոկտեմբեր 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Տ.Գրիգորյանս, դատական նիստում քննարկելով հայցի առարկան լրացնելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Թիվ ԵԴ2/9707/02/25 քաղաքացիական գործով հայցվորի ներկայացուցչի միջնորդությունից հետևում է, որ խնդրվել է թույլատրել հայցի հիմքի և առարկայի լրացումը հետևյալ բովանդակությամբ.

<<<ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող) կարիքների համար շանթարգելների և ձեռքի էլեկտրամեխանիկական գործիքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-16/1» ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետ՝Ընթացակարգ/:

Ընթացակարգին՝ ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Հայցվոր/, որն էլ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից ճանաչվել է ընտրված մասնակից:

Արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքվել է թիվ «ԲՄԱՊՁԲ-25-16/1-1» ծածկագրով գնման պայմանագիր:

www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-25-16/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից միակողմանի լուծվել է 03.09.2025թ. որոշմամբ /կցվում է/, մասնավորապես՝

ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը /այսուհետ՝ Ծառայություն/ հայտնել է, որ համաձայն իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ Մնացականյան Դավիթ Ա/Ձ-ն 2024թ. հունվարի 26-ից մինչև 2026թ. հունվարի 26-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, իսկ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի և Մնացականյան Դավիթ Ա/Ձ-ի միջև առկա է փոխկապակցվածություն ...:

Ելնելով վերագրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-25-16/1-1» ծածկագրով գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նխարարությունը 2025թ. սեպտեմբերի 3-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Պայմաագիրը միակողմանի լուծելու արդյունքում ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրել է N183 որոշումը՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ /կցվում է/:

Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է

պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Նույն հոդվածի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրից երկու տարի ժամկետով:

Գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշմամբ՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ և իպերատիվ պահանջում է, որպեսզի պատվիրատուի ղեկավարը կայացնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում:

Ինչպես նշել ենք, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշմամբ՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշմամբ հայտնել է հետևյալը:

«Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-

րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Այսպիսով, սույն որոշումը կայացվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և 2-րդ մասը:

Եվ այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Գտնում ենք, որ հայցադիմումով վիճարկվող որոշումը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին՝ որոշման պատճառաբանված լինելու պահանջին: Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատասխանողը ընդամենը մեկ տողով նշել է հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», սակայն թե ինչով է Հայցվորը խախտել այդ պայմանագրային պարտավորությունը և ինչում է դրսևորվում այդ խախտումը, մնում է միայն կռահել:

Այսպիսով, ուսումնասիրելով որոշումը, պարզ է դառնում, որ այն չի պարունակում պատճառաբանություն, պարզ և հասկանալի չի, թե ինչ իրավախախտման վարքագիծ է դրսևորել ՍՊԸ-ն, արդյոք դա հիմք է վերջինիս Ցուցակում ներառելու համար:

Նման պայմաններում խախտումը բավականաչափ որոշակի չէ, և պարզ չէ, թե հայցվորը ինչպես պետք է կանխատեսեր և իր վարքագիծը համապատասխանեցներ ենթադրյալ խախտման կանխարգելմանը:

Գտնում ենք, որ նման պայմաններում հայցվորին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշումը՝ բովանդակության մասով չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջին, ինչն ինքնին բավարար է այդ որոշումն անվավեր ճանաչելու համար:

Ի թիվս վերոգրյալի՝ հարկ ենք համարում նշել, որ որոշման պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջը ուղղակիորեն բխում է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքից, ինչը տվյալ դեպքում նույնպես խախտվել է: Մասնավորապես.

Սահմանադրական դատարանն իր 15.11.2019թ. թիվ ՍԴՈ-1488 որոշմամբ արձանագրել է.

«...իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

«... իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը» (ՍԴՈ-1148), «...ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՍԴՈ-1270), «... անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում» (ՍԴՈ-1439 որոշում):

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես,

ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված՝ իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՍԴՈ-1357):

«... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

...օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական ատյանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանն իր 03.05.2016թ. ՍԴՈ-1270 որոշմամբ արտահայտել է նաև այն իրավական դիրքորոշումը, որ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում:

Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «...որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին:

Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է» (ՍԴՈ-1452 որոշում):

Վերահաստատելով և զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն ամփոփել է, որ.

1) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,

3) որոշակիության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ոչ միայն

Սահմանադրության 79-րդ հոդվածում՝ որպես հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակող օրենքներին ներկայացվող բովանդակային պահանջ, այլև՝ որպես օրինականության սկզբունքի հիմնարար բաղադրիչ, ըստ որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուն լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին (Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն),

4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացածության աստիճանը,

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը, (...)»:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է նշել, որ

իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահպանման պարտադիր պահանջներից մեկն էլ վերաբերում է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ գործողություն, սակայն այն բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչում է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ ներկայումս ձևավորված դատական պրակտիկայի արդյունքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի պատվիրատուների որոշումները դատարանների կողմից անվավեր են ճանաչվում հենց այս՝ պատճառաբանված կամ բավարար պատճառաբանված չլինելու հանգամանքով պայմանավորված:

Դատարանի ուշադրությունը ցանկանում են հրավիրել թիվ ԵԴ/57929/02/22 քաղաքացիական գործով կայացված վճռին, որտեղ պատվիրատուի պատճառաբանված որոշումը անվավեր է ճանաչվել հետևյալ հիմնավորմամբ. «...Նման պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանող ընկերության ղեկավարի որոշումը՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, պատշաճ պատճառաբանված և ստորագրված չէ, ինչը հանգեցնում է դրա ոչ իրավաչափ լինելուն, ուստի հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման:»

Դատարանի ուշադրությունը ցանկանում ենք հրավիրել նաև թիվ ԵԴ/66922/02/22 քաղաքացիական գործով կայացված վճռին, որտեղ արձանագրվել է հետևյալը.

«...Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և ենթակետի հիմքով մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների էական խախտման հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու գործընթացը իրավական և օրինական գնահատելու համար պարտադիր պայման է օրենսդրի կողմից սահմանված իմպարտիվ պահանջների պահպանումը պատվիրատուի կողմից: Այդպիսի պահանջներից մեկն էլ վերաբերում է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ խախտում, սակայն այն

բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչում է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը»:

Դատարանի ուշադրությունը ցանկանում ենք հրավիրել նաև թիվ ԵԴ/12976/02/23 քաղաքացիական գործով կայացված վճռին, որտեղ Դատարանի կողմից արձանագրվել է հետևյալը. «Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի հիմքով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը գործընթացը իրավական և օրինական գնահատելու համար պարտադիր պայման է օրենսդրի կողմից սահմանված իմպերատիվ պահանջների պահպանումը պատվիրատուի կողմից: Այդպիսի պահանջներից մեկն էլ վերաբերում է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ խախտում, սակայն այն բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչումն է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը:

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո Դատարանը հարկ է համարում նշել, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը գործընթացը իրավական և օրինական գնահատելու համար պարտադիր պայման է օրենսդրի կողմից սահմանված իմպերատիվ պահանջների պահպանումը պատվիրատուի կողմից: Այդպիսի պահանջներից մեկն էլ վերաբերում է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ խախտում, սակայն այն բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչումն է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը: Դատարանը նշված փաստաթղթի գնահատման արդյունքում հանգում է հետևության, որ այն չի պարունակում պատճառաբանություն, և առկա չէ հիմնավորում, թե հայտում ինչպիսի անհամապատասխանություններ են առկա եղել: Փաստորեն խախտումը ձևականորեն բնութագրվել է, սակայն որոշման մեջ այն բավականաչափ որոշակի չէ:

Նման պայմաններում ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշումը չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջին, ինչն ինքնին բավարար է այն ոչ իրավաչափ ճանաչելու համար»:

Գտնում ենք, որ վերոշարադրված փաստերի առկայության պարագայում «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը իրավաչափ չէ:

Արդյունքում նման ոչ իրավաչափ, որոշման հետևանքով գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում թույլ տալու հիմքով Ընկերությունը երկու տարի ժամանակով ներառվելու է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ քաղաքացիական օրենգրքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտն անվավեր ճանաչելով:

ՀՀ քաղ. օր-ի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքին կամ այլ իրավական ակտերին չհամապատասխանող և քաղաքացու կամ իրավաբանական անձի քաղաքացիական իրավունքները ու օրենքով պաշտպանվող շահերը խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ակտը դատարանով կարող է ճանաչվել անվավեր:

Գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-25-16/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից միակողմանի լուծման հիմքով՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշումը՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու մասին իրավաչափ չէ, քանի որ այն ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի խախտմամբ, իսկ վերոհիշյալ պայմանագրի լուծումն էլ եղել է ոչ իրավաչափ, որի հետևանքով իրավաչափ չէ նաև ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշումը:

Տվյալ դեպքում Հայցվորի խախտված իրավունքների պաշտպանությունը հնարավոր է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թին կայացրած N183 որոշումը՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին՝ Դատարանի կողմից անվավեր ճանաչելու եղանակով:

Հաշվի առնելով, որ տվյալ դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-25-16/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից միակողմանի լուծման որոշումը ոչ իրավաչափ է, ինչը հիմնավորվել է սույն քաղաքացիական գործով ներկայացած հայցադիմումով, իսկ Հայցվորի խախտված իրավունքների վերականգնումը հնարավոր է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշումը՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին, Դատարանի կողմից անվավեր ճանաչելու միջոցով, ուստի, սույնով փոփոխում եմ սկզբնապես ներկայացված հայցը և սկզբնական հայցով ներկայացված իրավական և փաստական հիմքերով և սույն միջնորդությամբ լրացված իրավական և փաստական հիմքերով Դատարանին խնդրում եմ որպես հայցադիմումով ներկայացված հայցապահանջ ընդունել հետևյալը.

1. Անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի միջև 27.06.2025թ. կնքված թիվ «ԲՄԱՊՁԲ-25-16/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի կողմից միակողմանի լուծելու մասին 03.09.2025թ. որոշումը /ծանուցումը/:

2. Անվավեր ճանաչել՝ «ՄԵԳԱ ԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կարեն Բրուտյանի 12.09.2025թ-ին կայացրած N183 որոշումը:>>

Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը, Դատարանը ցանկանում է նշել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին և 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

Սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ առկա չէ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու հիմքերը, Դատարանը գտնում է, որ քննարկվող միջնորդությունը ենթակա է բավարարման:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայցի առարկայի և հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը, բավարարել:

Հայցի հիմքն ու առարկան թույլատրել նաև միջնորդությամբ նշված բովանդակությամբ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.10.21 12:47:53 AMT

ԴԱՏԱՎՈՐ՝
Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am